ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 661

10 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդկետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և ՀՀ կառավարության 30.11.2006թ. թիվ 1855-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 7 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի ծավալից դուրս բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից ինքնակամ իրականացված կառույցների հողամասերն անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցվում են շենքերի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
2. Ընդունել ի գիտություն, որ Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 7 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքին կից ինքնակամ իրականացված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 7 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 1420քմ, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2 և 3 ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և համաձայն տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 6-րդ գոտում:
4. Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 640

«03» հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2703-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս. թ. հոկտեմբերի 7-ին տոնվելու է Էջմիածին քաղաքի 2703-ամյակը: Միջոցառումը պատշաճ մակարդակով անցկացնելու և ծայնային սարքավորումների վարձույթի, միջոցառման կազմակերպման ու սպասարկման նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 1500.0 հազ. դրամ փոխանցել ա/ձ Հայկ Ղազարյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 641

«03» հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

**ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 40 ՇԵՆՔԻ ԹԻՎ 27 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Էջմիածնի համայնքապետարանի և Վազգեն Առաջին փողոցի թիվ 40 շենքի թիվ 27 բնակարանի բնակչուհի Լիանա Գրիգորյանի միջև 25.09.2018թ. կնքվել է համաձայնագիր-պարտավորագիր վերջինիս Հայաստանում Ֆրանսիական համալսարանում ուսումնառության կուրսը ավարտելու համար կրթական պարգև հատկացնելու և համալսարանը ավարտելուց հետո 5 /հինգ/ տարի անընդմեջ համայնքապետարանի ենթակայության տակ աշխատելու նպատակով մասին:

Ելնելով վերոհիշյալից.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին համայնքի 2018թ. բյուջեով նախատեսված <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածի /հոդ. 4727/ միջոցներից 405.0 հազ. դրամ փոխանցել վերջինիս <Ակբակրեդիտագրիկոլ բանկ> ՓԲԸ-ի 220303350015000 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 642

«03» հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԶՎԱՐԹՆՈՑ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 59 ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿՐԹԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածնի համայնքապետարանի և Զվարթնոց թաղամասի թիվ 2 շենքի թիվ 59 բնակարանի բնակչուհի Մարիամ Հարությունյանի միջև ___________ կնքվել է համաձայնագիր վերջինիս Հայաստանի Հանրապետության <ՄՖԲ> ֆինանսական ակադեմիայի <Հաշվապահական հաշվառում> ֆակուլտետի ուսումնառության կուրսը ավարտելու համար կրթական պարգև հատկացնելու և ակադեմիան ավարտելուց հետո 5 /հինգ/ տարի անընդմեջ համայնքապետարանի ենթակայության տակ աշխատելու մասին:

Ելնելով վերոհիշյալից.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված <Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից> հոդվածի /հոդ. 4727/ միջոցներից 130.0 հազ. դրամ փոխանցել վերջինիս <Հայէկոնոմբանկ> ԲԲԸ-ի 163006227603 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 648

08 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

**ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Ռաֆիկ Հախվերդյանին պատկանող արհեստանոցին /հիմք՝ սեփ. վկայական 2418670/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին փողոց թիվ 43/51 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 649

08 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի, Չերնիշևսկու փողոցի թիվ 37 տան բնակիչ Գևորգ Ղազարյանի դիմումը բնակելի տունը բաժանելու մասին պարզվել է.

Էջմիածին քաղաքի, Չերնիշևսկու փողոցի թիվ 37 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական 10092018-04-0049/ պատկանում է Գևորգ, Ռաֆիկ և Սամվել Ղազարյաններին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան » ԱՁ /վկայական թիվ 096/ կողմից հաստատված հատակագծերը:

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Չերնիշևսկու փողոցի թիվ 37 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 0.01245 հա մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չերնիշևսկու փողոց թիվ 37, 0.01755 հա մակերեսով մասին /որից 0.00275 հա ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Մայակովսկի փողոց թիվ 3/1 , 0.01715 հա մակերեսով մասին /որից 0.00275 հա ընդհանուր օգտագործման տարածք/ բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Մայակովսկի փողոց թիվ 3/2 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 650

08 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0852-0024 ծածկագրով հողամասին բնակելի տնով /հիմք՝ վկ.N 13122017-04-0040/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թորամանյան փողոց թիվ 2/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 65

08 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԱՊԵՏ ՌՈՒԲԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 73 տան բնակիչ Կարապետ Ռուբենի Կարապետյանի դիմումը՝ պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 06.07.2007թ. տրված թիվ 4653 սեղանամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագիրը/, Էջմիածին քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 72 հասցեում գտնվող 603քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 72 հասցեում գտնվող 603քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Կարապետ Ռուբենի Կարապետյանի /ծնված 08.01.1953թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սպանդարյան փողոց թիվ 72/1:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 652

08 հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿՈՄԻՏԱՍ ՄՈՒՐԱԴԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Միչուրին փողոցի թիվ 2-րդ փակուղու թիվ 1 տան տան բնակիչ Կոմիտաս Մուրադի Դանիելյանի դիմումը պարզվել է, որ.

- Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Ղարիբյանի կողմից 19.06.2018թ. տրված թիվ 3255 և 3256 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, էջմիածին քաղաքի Միչուրին 2-րդ փակուղու թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Կոմիտաս Մուրադի Դանիելյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասը կազմում է 547քմ, որից.
- օրինական հողամասը կազմում է 515քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- ավել օգտագործվում է 32քմ սահմանազատված հողամաս, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- ընդհանուր օգտագործման հողամաս 17քմ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Միչուրին փողոցի թիվ 2-րդ փակուղու թիվ 1 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 32քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Կոմիտաս Մուրադի Դանիելյանի /ծնված 01.05.1955թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 653

08 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԱԼՈՒՍՏ ԵՂԻԱՅԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Հրազդան քաղաքի Կենտրոն փողոցի թիվ 4 շենքի թիվ 21 բնակարանի բնակիչ Գալուստ Եղիայի Խուդավերդյանի լիազորված անձ՝ Արարատ Եղիայի Խուդավերդյանի դիմումը՝ պարզվեց, որ Գալուստ Եղիայի Խուդավերդյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 25.04.1989թ. տրված տեխնիկական անձնագիրը/, էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 60 հասցեում գտնվող 429քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 60 հասցեում գտնվող 429քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Գալուստ Եղիայի Խուդավերդյանի /ծնված 29.03.1958թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Վ.Մամիկոնյան փողոց թիվ 60/1:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 654

08 հոկտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌՈԲԵՐՏ ԲԱԲԿԵՆԻ ԹԱԹԱՐՅԱՆԻ, ԼԱՐԻՍԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԹԱԹԱՐՅԱՆԻ, ԱՐԿԱԴԻ ՌՈԲԵՐՏԻ ԹԱԹԱՐՅԱՆԻ, ՀԱՅԿ ՌՈԲԵՐՏԻ ԹԱԹԱՐՅԱՆԻ ԵՎ ՍԵՐԳԵՅ ՌՈԲԵՐՏԻ ԹԱԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 10/3 տան բնակիչ Ռոբերտ Բաբկենի Թաթարյանի դիմումը՝ պարզվել է, որ համաձայն 21.11.1995թ. տրված սեփականության վկայագրի՝ Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 10/3 հասցեում գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները սեփականության իրավունքով պատկանում է Ռոբերտ Բաբկենի Թաթարյանին, Լարիսա Վոլոդյայի Թաթարյանին, Արկադի Ռոբերտի Թաթարյանին, Հայկ Ռոբերտի Թաթարյանին և Սերգեյ Ռոբերտի Թաթարյանին, որը կառուցվել է համայնքային սեփականություն հանդիսացող փաստացի առկա սահմանազատված 85քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա, սակայն դրանց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված հողհատկացման և քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը: Բնակելի նշանակության օժանդակ շինությունները, կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 10/3 հասցեում գտնվող անհատական բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 85քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը համարել՝ Ռոբերտ Բաբկենի Թաթարյանի /ծնված 06.11.1955թ./, Լարիսա Վոլոդյայի Թաթարյանի /ծնված 22.12.1956թ./, Արկադի Ռոբերտի Թաթարյանի /ծնված 19.07.1986թ./, Հայկ Ռոբերտի Թաթարյանի /ծնված 30.06.1978թ./ և Սերգեյ Ռոբերտի Թաթարյանի /ծնված 21.12.1979թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ARMAVIRI MARZ ARMAVIR MARZ ETCHMIADZIN MUNICIPALITY REPUBLIC OF ARMENIA
04708275

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 655

«08» հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

### ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2703-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս. թ. հոկտեմբերի 7-ին տոնվել է Էջմիածին քաղաքի 2703-ամյակը: Միջոցառման համար ձեռք բերված փուչիկների, ատլասե ժապավենով հելիում գազով լցված փուչիկների, վրձինների և այլ ապրանքների նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 210.2 հազ. դրամ փոխանցել ա/ձ Ռայա Շատվորյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 656

«08» հոկտեմբերի 2018թ.

ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2703-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս. թ. հոկտեմբերի 7-ին տոնվել է էջմիածին քաղաքի 2703-ամյակը: Միջոցառմանը կատարված օդային տեսանկարահանման և լուսանկարահանման ծառայության նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 90.0 հազ. դրամ փոխանցել «Բիոմեջիք» ՍՊԸ-ի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 658

03 հոկտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 20.09.2018Թ. ԹԻՎ 595 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 20.09.2018թ. «Անշարժ գույքը միավորելու և ընդհանուր հասցե տրամադրելու մասին» թիվ 595 որոշման մեջ կատարել փոփոխություն.

. Որոշման առաջին կետի «Էջմիածին քաղաքում գտնվող, Արման Ղազարյանին /համասեփ. Լալա Հովհաննիսյան, Շուշանիկ Ղազարյան/ պատկանող /վկ. 2687981, N 27012016-04-0005/ բնակարանները միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք.Էջմիածին, Սբ.Մ.Խորենացի փողոց թիվ 14 շենք թիվ « 21 բնակարան» բառերի փոխարեն կարդալ «21, 22» բնակարան բառերը :

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 659

«09» հոկտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 2703-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս. թ. հոկտեմբերի 7-ին տոնվելու է Էջմիածին քաղաքի 2703-ամյակը: Միջոցառումը պատշաճ մակարդակով անցկացնելու և լուսային տեխնիկայի վարձույթի նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Էջմիածին քաղաքի 2018թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 1240.0 հազ. դրամ փոխանցել ա/ձ Հայկ Ղազարյանի հաշվեհամարին՝ նրա հետ կնքած պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 660

10 նոյեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ԹԻՎ 6 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 7 շենքի թիվ 6 բնակարանի բնակիչ Իշխան Վիլիկի Պողոսյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան, իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 26102017-04-0014 տրված 26.10.2017թ. և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը/ Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 7 շենքի թիվ 6 բնակարանին կից իր կողմից ինքնակամ կառուցված 43,8քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 7 շենքի թիվ 6 բնակարանին կից ինքնակամ կառուցված 43,8քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Ինքնակամ կցակառույցի օրինականացման համար սահմանված 42048 /քառասուներկու հազար քառասունութ/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պ ետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ